



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«20» 01 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 008 - 25

Նախաձեռնող՝

«Շին Տրավերտին» ՍՊԸ

Արարափի մարզ, Արարափ համայնք, Շահումյան փ. 5

Գործունեությունը՝

Արարափի տրավերտինների և կավերի հանքավայրի
Ամրոցասարի տրավերտինների տեղամասի օգտակար
հանածոյի արդյունահանում

Արարափի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 008 - 25

«20» հունվարի 2025թ.

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տրավերտինների տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«Շին Տրավերտին» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք

Ներածական մաս. Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տրավերտինների տեղամասը գտնվում է Արարատի մարզի Արարատ խոշորացված համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքում:

Հայցվող հողամասը հանդիսանում է համայնքային սեփականություն, նպատակային նշանակությունն արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ /ՀՕ-110-Ն/ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ: Փորձաքննական գործընթացն իրականացվել է 2014 թ. օրենքի դրույթներին համապատասխան:

Նկարագրական մաս. Հանքավայրի համար հայցվող տարածքը տեղակայված է Արարատ քաղաքից ուղիղ գծով մոտ 1200 մ դեպի հյուսիս հյուսիս-արևելք, իսկ Արարատ բնակավայրի մոտակա շինությունից՝ ուղիղ գծով 180 մ դեպի արևելք հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հեռավորությունը բնակավայրերի մոտակա շինություններից կազմում է՝ Գոռավանից՝ մոտ 5.6 կմ հարավ-արևմուտք, Ավշարից՝ 1.2 կմ արևելք, Այգավանից՝ 2.6 կմ հարավ-արևելք, Վանաշենից՝ 4.1 կմ հարավ-արևելք, Վեղի քաղաքից՝ 5.8 կմ հարավ արևմուտք:



Հ-8 և Հ-10 հանրապետական նշանակության ավտոճանապարհները հայցվող տեղամասից գտնվում են՝ համապատասխանաբար 1.5 կմ և 4.7 կմ հեռավորությունների վրա: Դրանց հետ տեղամասի տարածքը կապված է գրունտային բարեկարգ ճանապարհներով:

Տեղամասը գտնվում է ծովի մակարդակից 840-900 մ բարձրության վրա: Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև $+40^{\circ}\text{C}$, իսկ ձմռանը՝ -10°C): Տարեկան միջին ջերմաստիճանը $+16^{\circ}\text{C}$ է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300 մմ:

Շրջանի հիմնական ջրային երակը Վեդի գետն է, /հայցվող տարածքից Վեդի գետը հոսում է ավելի քան 2.6 կմ հեռավորության վրա: Այն սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի ծայր հարավում ընկած Մանկունք լեռնագագաթի հարավ-արևելյան լանջերի՝ մոտ 2700 մ բարձրություններից:

Հայցվող տարածքում բացակայում են անտառային ծածկույթը, գետային ցանցը, շինարարական կառույցները և բնական ու պատմամշակութային հուշարձանները:

Հետախուզված տեղամասը կազմում է Արարատի տրավերտինի հանքավայրի հարավ-արևմտյան մասը և ունի շատ պարզ երկրաբանական կառուցվածք:

Հիմնական ապարները ներկայացված են դեպի հարավ-արևմուտք $5-8^{\circ}$ անկում ունեցող միջին չորրորդականի հասակի տրավերտիններով: Տրավերտինները թիկնոցաձև, աններդաշնակորեն ծածկում են ստորին չորրորդականի հասակի շեկ կրային՝ մերգելային կավերին, որոնց հզորությունը հասնում է 8-12 մ:

Հանքավայրի պաշարները հաստատվել են Բնապահպանության նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ խորհրդի 2004թ. փետրվարի 27-ի թիվ 26-Ա որոշմամբ և որոշվել է՝ հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի տրավերտինի և կավերի հանքավայրի հարավ-արևմտյան թևի տրավերտինների վերագնահատված պաշարները 2003թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ A կարգով և 3013.9 հազ.մ³ քանակությամբ:

Պաշարների հաշվարկման 8-A բլոկի պաշարներն, ինչպես նաև 1976թ. պաշարների գլխավոր հաշվարկման 1-A բլոկի սահմաններում տարանջատված և որոշմամբ հաստատված 1'-A ենթաբլոկի տրավերտինների պաշարներն ամբողջությամբ հաշվառվել են երեսապատման քարերի (ԳՈՍՍ9479-98) Հանրապետական հաշվեկշռում բլոկների 55.0% միջին ելքով: Տվյալ ցուցանիշի հավաստիությունը ընդունվել է համապատասխանող B կարգի պաշարներին:

Նախագծի համաձայն, բացահանքի սահմաններում 1.43 հա /14336մ²/ տարածքում տրավերտինների հաշվեկշռային պաշարները կազմում է 193557 մ³, իսկ արդյունաբերական պաշարներինը՝ 164330 մ³:

Լեռնային աշխատանքների զարգացումը բացահանքում նախատեսվում է կատարել բացահանքի մշակման ժամանակացուցային պլանին համապատասխան, որի համաձայն բացահանքի հանքաստիճանները մշակվում են 2.5 մ բարձրությամբ հանքաստիճաններով, հաջորդաբար, վերևից-ներքև: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ օգտակար հանածոյի կազմում է 8500մ³ տրավերտինների զանգված: Տարեկան հեռացվող մակաբացման /փուխր բեկորային/ ապարների քանակը կազմում է 834 մ³:



Օգտակար հանածոյի հզորությունը տատանվում է 12-22 մ սահմաններում /միջինը կազմելով շուրջ 13.5 մ/: Նախագծված բացահանքի ծառայման ժամկետը 19 տարի է, աշխատանքային ռեժիմը շուրջտարյա՝ 260 օր, միահերթ, հնգօրյա աշխատանքային շաբաթով:

Տրավերտինների արդյունահանումը կատարվելու է DENA FONOON մակնիշի պլանստաճոպանային քարհատ մեքենայով: Բլոկների բարձունքն իրականացվելու է ավտոկոունկի միջոցով:

Տեղանքի ռելիեֆը և տեղամասի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները թույլ են տալիս հանքավայրի շահագործումն իրականացնել բաց եղանակով:

Բլոկների միջին ելքը կազմում է 55%: Մակաբացման ապարները ներկայացված են միայն ճաքճքված խոռոչավոր տրավերտիններով /փուշտա/, որոնք պահեստավորվելու են արտաքին լցակայանում:

Հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատական համակարգը ներկայացված է ARM WGS 84-ով:

- | | |
|------------------------------------|------------------------------------|
| 1. Y=8474425.5064 X=4413722.5133, | 2. Y=8474458.2826 X=4413756.1467, |
| 3. Y=8474480.2480 X=4413778.2502, | 4. Y=8474488.5539 X=4413786.4332, |
| 5. Y=8474501.0000 X=4413785.0000, | 6. Y=8474470.1498 X=4413904.9125, |
| 7. Y=8474522.3920 X=4413943.2598, | 8. Y=8474600.0000 X=4413910.0000, |
| 9. Y=8474602.2217 X=4413883.7096, | 10. Y=8474590.6644 X=4413885.9722, |
| 11. Y=8474567.7297 X=4413908.2889, | 12. Y=8474516.6701 X=4413880.1496, |
| 13. Y=8474511.3906 X=4413844.0909, | 14. Y=8474525.0731 X=4413819.9770, |
| 15. Y=8474527.8885 X=4413782.4748, | 16. Y=8474517.9977 X=4413762.4177, |
| 17. Y=8474504.2333 X=4413746.3141, | 18. Y=8474508.5211 X=4413709.0125, |
| 19. Y=8474546.3899 X=4413660.8931, | 20. Y=8474547.1610 X=4413648.9615, |
| 21. Y=8474542.3379 X=4413649.9971, | 22. Y=8474425.5064 X=4413722.5133 |

Օգտակար հանածոյի արդյունահանման և ենթակառուցվածքների ստեղծման նպատակով օտարվելու է 2.189 հա տարածք, այդ թվում՝ բացահանք՝ 1.43 հա, արտաքին լցակայան՝ 0.734 հա և արտադրական հրապարակ՝ 0.025 հա: Սակայն արտաքին լցակայանի և արտադրական հրապարակի տարածքներն արդեն իսկ նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանից շահագործված են եղել, իսկ բացահանքի տարածքի 67,5%-ը կամ 1 հա նույնպես նախկինում մասամբ շահագործված է եղել: Ուստի փաստացի խախտվելու է ընդամենը 0.47 հա մակերես:

Համաձայն հաշվետվության՝ աշխատանքների իրականացման համար բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներն արդեն իսկ առկա են: Ենթակառուցվածքների ձևավորման նպատակով նոր տարածքների խախտում չի կատարվելու:

Նախագծով նախատեսվում է.

Հանքարդյունահանման աշխատանքները կատարել երեսապատման իրերի բլոկների արդյունահանման համար:

Հանքարդյունահանման աշխատանքները կատարել մեխանիզացված եղանակով՝ օգտագործելով ժամանակակից քարհատ մեքենաներ:

Արդյունահանված բլոկները տեղափոխել սպառողի տրանսպորտային միջոցներով:



Տրավերտինների ջարդոնները, փուշտան և ոչ կոնդիցիոն ապարները (որպես ցեմենտի հումք) համատեղ տեղափոխել մինչև 2 կմ հեռավորության վրա գտնվող արտաքին լցակայան:

Կատարել լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը՝ 250 մ;
- առավելագույն լայնությունը՝ 85 մ;
- մշակման խորությունը՝ 27.5 մ;
- օտարման տարածքը՝ 1.43 հա /14336մ²/;
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 193557 մ³;
- օգտակար հանածոյի արդյունաբերական պաշարների քանակը՝ 164330 մ³;
- հանքաստիճանի բարձրությունը՝ 2.5 մ;
- պահպանիչ բերմայի լայնությունը՝ 0.83 մ;
- կողի թեքման անկյունը՝ 69°:

Բացահանքի 865-857.5 մ նիշ ունեցող հորիզոնների բացումն իրականացվելու է բացահանքի հարավ-արևմտյան մասով անցնող գրունտային ճանապարհից դեպի 865 մ նիշ ունեցող հորիզոն մոտեցող գրունտային ավտոճանապարհի անցումով:

855-837.5 մ նիշ ունեցող հորիզոնների բացումն իրականացվում է բացահանքի արևելյան մասով անցնող գրունտային ճանապարհից դեպի նշված հորիզոններ մոտեցող գրունտային ավտոճանապարհների անցումով:

Առավելագույն հաղթահարվող փեքությունն ընդունված է 100%: Մոտեցող գրունտային ճանապարհների լայնությունը հիմքի մասում ընդունված է 6-7 մ:

Հանքավայրում մակաբացման ապարներն են համարվում փուշտաշերտի ապարները 4516 մ³ ծավալով:

Մակաբացման աշխատանքներն իրականացվում են բազմաֆունկցիոնալ սարքավորում ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Միաքարի անջատումը զանգվածից կատարվում է ավաստաճոպանային քարհատ մեքենաներով:

Ընդերկայնական ուղղությամբ հատվող շերտի երկարությունը ընդունված է 6.0 մ, իսկ ընդլայնական ուղղությամբ՝ 1.5 մ, բարձրությունը՝ 2.5 մ:

6.0 x 2.5 x 1.5մ չափերի հատված պանելի շրջումը հանքաստիճանի հատակի վրա կատարվելու է բազմաֆունկցիոնալ սարքավորման շերեփի միջոցով:

Կուտակված արտադրական ջարդոնի /ցեմենտի հումքի/ (14.17 մ³/հերթ) փուշտայի (0.88 մ³/հերթ), միջշերտային և հիմնատակող կավային ապարների (1.34 և 0.98մ³/հերթ) բարձումն ավտոինքնաթափերի մեջ կատարվելու է 1.0 մ³ շերեփի տարողությամբ բազմաֆունկցիոնալ սարքավորման միջոցով:

Բացահանքի լցակայան առաջացնող ապարները՝ 90165 մ³ ընդհանուր ծավալով, ներկայացված են բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած ջարդոնով /ցեմենտի հումք/ 73949 մ³, փուշտաշերտի ապարներով՝ 4516 մ³, միջշերտային և հիմնատակող կավային ապարներով՝ համապատասխանաբար՝ 6770 և 4930 մ³:



Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած ջարդոնը և փուշտաշերտի ապարները տեղափոխվելու են բացահանքի հարավ-արևելյան հատվածում ձևավորվող արտաքին լցակույտ: Արտաքին լցակույտում տեղադրվելու է 50400 մ³ ապար: 842.5 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումից հետո նշված ապարների մնացած 28065 մ³-ը տեղադրվելու է 842.5-837.5 մ նիշ ունեցող հորիզոնների արդյունահանված տարածքներում՝ ձևավորելով ներքին լցակույտ: Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած ջարդոնի և փուշտաշերտի ապարների ներքին և արտաքին լցակույտերի վերին հարթակի նիշը 846 մ նիշն է: Արտաքին լցակույտի վերևի հարթակի մակերեսը 5600 մ² է, ընդհանուր մակերեսը 7340 մ² է, առավելագույն բարձրությունը 10 մ, շեփ թեքման անկյունը 35⁰: Ներքին լցակույտի մակերեսը կազմում է 4895 մ²: Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած ջարդոնի և փուշտաշերտի ապարների լցակույտի ընդհանուր մակերեսը կազմելու է 10495 մ²:

Կավային ապարները տեղափոխվելու են 855-845 մ նիշ ունեցող հորիզոնների շահագործված տարածք՝ ձևավորելով ներքին լցակույտ: Կավային ապարների ներքին լցակույտի մակերեսը կազմելու է 7130 մ², միջին բարձրությունը՝ 1.64 մ: Միայն 857.5 մ նիշ ունեցող հորիզոնի կավային ապարները՝ 620 մ³ ծավալով, ժամանակավոր պահեստավորվելու են 855 մ նիշ ունեցող հորիզոնին մոտեցող ճանապարհի աջակողմյան հատվածում՝ զբաղեցնելով 310 մ² մակերես՝ 2 մ միջին բարձրությամբ:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի շրջանակներում բացահանքի հատակի և լցակույտի վերին հարթակի տարածքում փոխված և հարթեցված ապարները պարարտացվելու են գրանուլացված կենսահումուսով, համալիր օրգանահանքային պարարտանյութերով: Այնուհետև կատարվելու է տարածաշրջանի լանդշաֆտներին բնորոշ տեսակների սերմերի ցանք:

Բացահանքում արդյունահանման աշխատանքների ավարտից հետո հարթեցում կկատարվի արդյունաբերական հրապարակում՝ 0.025 հա, արտաքին լցակույտի վերին հարթակում՝ 0.56 հա և բացահանքի հատակում՝ 1.2 հա մակերեսներով, ընդհանուր՝ 1.785 հա:

Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսված ծախսերի ամբողջ արժեքը կկազմի 1244580 ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի ծախսը՝ 560.46 հազար ՀՀ դրամ է:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ընդերքօգտագործման թափոնները հանքի տարածքում ներկայացված են փուշտաշերտի ապարներով, ինչպես նաև միջշերտային և հիմնատակող կավային ապարներով, որոնց ծավալները համապատասխանաբար կազմում են՝ 4516մ³, 6770մ³ և 4930մ³: Համաձայն ՇՄԱԳ-ում ներկայացված տվյալների՝ տեղամասում տրավերտինները լիովին համապատասխանում են ԳՕՏ-9479-98 միջպետական ստանդարտներին, իսկ թափոններն, անհրաժեշտության դեպքում, կարելի է օգտագործել որպես ցեմենտի և կրի արտադրության հումք,

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների, մեխանիզմների շահագործման արդյունքում՝ օգտագործված շարժիչների բանեցված և դիզելային յուղերի



/մոտ 10-12/տարի/ մնացորդներ, որոնք հավաքվելու են առանձին մետաղական տարաների մեջ և պայմանագրային հիմունքներով հանձնվելու են յուրեր և քսայուրեր վերամշակող ընկերություններին: Գործունեության արդյունքում առաջանալու են մի շարք արտադրական թափոններ /յուղոտված լաթեր, բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ և այլն/, որոնց կառավարման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներառված է հաշվետվությունում և թափոնների կառավարման պլանում:

Գործունեության իրականացման ընթացքում ջուրն օգտագործվելու է խմելու ($75.14 \text{մ}^3/\text{տարի}$, միջին օրեկան 0.29մ^3) և տեխնիկական ($461.6 \text{մ}^3/\text{տարի}$) նպատակներով: Տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է ճանապարհների, արտադրական հրապարակների, լցակույտերի, 3600մ^2 մակերեսով ընդհանուր տարածքների փոշենստեցման համար: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը՝ 0.43մ^3 օրական քանակությամբ, հավաքվելու են բետոնային լցարանում, որը պարբերաբար հեռացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից: Տեխնիկական ջրի ծախսը ճոպանային սղոցների աշխատանքների ժամանակ կազմում է 25.0 լ/րոպե: Ճոպանային սղոցի աշխատանքների ջրամատակարարման համար նախատեսվում է 30.0մ^3 տարողությամբ ջրի ցիստեռն:

Ճոպանային քարհատ մեքենայի ճոպանները սառեցնող ջրերը ջրհեռացնող առվակի միջոցով թափվելու են տիղմազտիչ հոր, որտեղ փոշին հորի հատակում նստելուց (շլամ) հետո մաքրված ջուրը կրկին օգտագործվելու է ճոպանները սառեցնելու համար:

Տիղմազտիչ հորի չափերն ընդունված են $4.0 \times 4.0 \times 3.0$ մ: Տիղմազտիչ հորի հատակում հավաքված շլամը պարբերաբար հանվելու և տեղափոխվելու է արտաքին լցակույտեր:

Հաշվետվությունում ներառված է գրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, լանդշաֆտի փոփոխության և թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում տրանսպորտի աշխատանքից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխազազեր, դիզելային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի, ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների («Էկո ցենտր» ծրագիր)՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Շահագործման ընթացքում նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման,



թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում.

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրը 2 անգամ,

- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա գազազտիչ սարքերի, ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,

- տեխնիկական միջոցների սպասարկում նախապես որոշված սպասարկման կետերում,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում՝ բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,

- մաշված անվադողերի, կապարե կուտակիչների հանձնում՝ լիցենզավորված մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ ջրային ռեսուրսների մեջ արտահոսքը կանխելու նպատակով,

- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթը մեկ անգամ,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,

- Կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,

- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան հատկացնել 625.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Արդյունահանման աշխատանքները կազմակերպելու համար, հիմնականում օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները: Հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Փորձաքննության ներկայացված՝ գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցության նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության,



մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը, Արարատ համայնքը: ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննության բոլոր փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Արարատի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Նախատեսվող գործունեության համար ապահովված է սանիտարապաշտպան գոտու ապահովման համար պահանջվող չափը:

Փորձաքննական պահանջներ

1. Պահպանել գնահատման հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), մոնիթորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:
3. Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումն (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Պահպանել նախագծով նախատեսված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները և նբացառել հանքավայրում պայթեցման աշխատանքները:
5. Ապահովել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Շին Տրավերտին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տրավերտինների տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Արմինե Վարդանյան